
**ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՌԱՔԵԼՅԱՆ Գ. Հ.

Լուսանկարչության ծագումը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ամենակարևոր փուլերից է, որն իր էական ազդեցությունն ունի ժամանակակից մշակույթի, գիտության և տեխնիկայի բարգավաճման մեջ:

Սկզբնական շրջանում լուսանկարչությունը գեղագիտական ավանդույթներ չունեց: Սակայն դասական կերպարվեստի հետևորդ գեղանկարիչ-լուսանկարիչներն ապացուցեցին, որ այն նույնպես ունի միայն իրեն հատուկ գեղարվեստական միջոցներ: Լուսանկարչությունը կարողացավ ձեռք բերել գեղարվեստական զգեր նախ դիմանկարային ժանրում: Գեղանկարիչ-լուսանկարիչներն ապացուցեցին, որ լուսանկարչությունը արվեստաբանական տեսանկյունից չեզոք չէ, և հնարավոր չէ անտեսել նրա ակնհայտ գեղարվեստական արժեքը:

Գեղարվեստական լուսանկարչության հիմնադիրը համարվում է շոտլանդացի Դեյդ Օկտավիուս Հիլը (1802-1870 թթ.)¹, որի լուսանկարներն զբաղեցնում էին եվրոպական երկրների լավագույն հրատարակությունների էջերը: Հիլը և նրա հայրենակից Ռոբերտ Ադամսոնը հիմնականում ֆիքսում էին մարդկանց դիմախաղը: Ռուսաստանում դիմանկարային ժանրի գեղարվեստական լուսանկարչության հայտնի դեմքեր էին Ս. Լոբինովան, Ն. Պետրովը, Մ. Նապեբաումը, Ն. Սվիցով-Պառլան, Ա. Կարելինը և այլք²:

Վերոնջյալ ժանրով էին ստեղծագործում նաև հայ առաջին լուսանկարիչներ Վիչեն, Ստեփան և Գևորգ Աբդուլլահյան Եղբայրները: XIX դ. երկրորդ կեսին տարածաշրջանում գործել են հայազգի մի շարք լուսանկարիչների տաղավարներ, որոնցից առաջինը բացվել է 1858 թ. և պատկանել է Աբդուլլահյան երեք եղբայրներին: Նրանք մի շարք լուսանկարչատներ են ունեցել տարբեր քաղաքներում (Կ. Պոլիս, Կահիրե և այլուր). դրանք որևէ բանով չեն զիջել եվրոպական լուսանկարչական խոշոր հաստատություններին³: Նըշենք, որ Վ., Ս. և Գ. Աբդուլլահյանների թողած գործերն ունեն պատմական մեծ արժեք:

1948 թ. Երևանում, Արվեստի աշխատողների տանը հայ լուսանկարչության պատմության մեջ առաջին անգամ Անդրանիկ Քոչարը (Անդրանիկ Մելիքի Քոչարյան) բացեց գեղարվեստական լուսանկարների ցուցահանդես:

Լուսանկարչական արվեստի կայացումը Հայաստանում կապված է հենց Անդրանիկ Քոչարի անվան հետ: 1962 թ. նրա ջանքերով ստեղծվել է «Երևան»

¹ Морозов С. Творческая фотография, М., 1989, с. 47.

² Чибисов К. Очерки по истории фотографии, М., 1987, с. 90.

³ Քոչար Վ., Հայ լուսանկարիչներ, Ե., 2007, էջ 52:

լուսանկարչական ֆոտոակումբը, որը տասը տարի անընդմեջ դեկավարել է ինքը: Մոտ մեկ տարի այս ակումբի նախնական հավաքատեղին եղել է իր բնակարանը, իսկ անդամները ոչ միայն մասնագետ լուսանկարիչներ էին, այլ նաև՝ մեծ թվով սիրող նկարիչներ: Անշուշտ, ակումբը մեծ դեր ուներ լուսանկարչության զարգացման գործում: Ֆոտոսիրողների աշխատանքները ցուցադրվում էին հանրապետական ու միջազգային ցուցահանդեսներում, շահում մրցանակներ ու պատվոգրեր:


Իհարկե, խորհրդային ժամանակաշրջանի գաղափարախոսական սահմանափակումները կաշկանդում էին արվեստագետների ստեղծագործական ազատությունը: Հենց առաջին ցուցահանդեսի ժամանակ ցուցադրությունից հանվում են Անդրանիկ Քոչարի մի քանի աշխատանքներ: Բերվում են անհեթեթ, անզամ ծիծաղելի բացատրություններ, ինչպես, օրինակ, «Նատյուրմորտում պատկերված կուժի կանթը նման է Մտալինի քթին»⁴: Այս և նման շատ միջադեպեր են տեղի ունենում: Դրանք, սակայն, չեն վիստեցնում վարպետին: Նա շարունակում է լուսանկարել իր ստեղծագործական մեթոդով և ուրույն մոտեցումներով վավերացնում արժեքավոր ու հիշարժան կադրեր: Քոչարի ստեղծագործությունը ներառում է ոչ միայն դիմանկարային ժանրը. նրան հետաքրքրել են և բնանկարը, և՛ նատյուրմորտը: Նա առավել հայտնի է իբրև սև ու սպիտակ դիմանկարների հեղինակ և այդ երանգների նրբություններին տիրապետող լուսանկարիչ: Նմանօրինակ վարպետությունը գայտուն է դրսևորվել բոլոր ժանրերի աշխատանքներում:

Ա. Քոչարի ստեղծագործության զգալի մասն են կազմում դիմանկարները: Քիչ չեն նաև բնանկարները, ճարտարապետական հուշարձանների, կենդանիների, երեխաների նկարները, նատյուրմորտները, կոմպոզիցիաները, որոնք Քոչարի գեղանկարչական մտածողության ինքնատիպ դրսևորումներն են: Անդրանիկ Քոչարի ստեղծագործությունը բաղկացած է ավելի քան երեք հազար նեգատիվից:

Քոչարի դիմանկարները մեզ ներկայացնում են հայաստանաբնակ և սփյուռքահայ արվեստագետներին՝ կերպարների մի ամբողջ բույլ, որը կարելի է անվանել տրամադրությունների ու բնավորությունների պատկերասրահ: Դիմանկարի վարպետի գործերը կոմպոզիցիայով մեկը մյուսին չեն կրկնում: Դյուրին չէ մեկ պահի մեջ խտացնել այն ամենը, ինչով օժտված է անհատը: Անդրանիկ Քոչարը տեսել ու վավերացրել է իր ժամանակի բոլոր բնագավառների անհատականություններին, առաջատարներին, նաև գյուղացուն, հասարակ մարդուն, երիտասարդին ու տարեցին, նրանց դիմախաղը, ապրումները, անզամ մտքերն ու ցանկությունները: Քոչարը համոզված էր, որ յուրաքանչյուր մարդու դիմախաղն ու շարժումները անկրկնելի են, և դիմանկարի նպատակն է այդ անկրկնելին պատկերելը: Նրա կարծիքով, չկա ոչ լուսանկարելի դեմք, հարկավոր է միայն գտնել այդ դիտակետը, այդ պահը: Հենց այստեղ էլ թաքնված է լուսանկարչի

⁴ Ըստ Վ. Քոչարի բանավոր խոսքի (վերջինիս պատմել է ցուցահանդեսի կազմակերպիչ Կոլյա Ստեփանյանը):

վարպետությունը: «Հաջողության հասնելու համար հարկավոր է մարդուն տեսնել այնպիսին, ինչպիսին նա իրականում կա: Բնորդից պետք չէ պահանջել թեստեր, այլ հարկավոր է որսալ այդ պահը, որում բնորդը բնագորրեն բացվում է քո առջև»⁵:



Նկ. 1

Ավետիք Իսահակյանի ծննդյան 80-ամյակի առիթով (1955 թ.)

Նրա դիմանկարներից շատերը դարձել են խորհրդանիշներ: Այդ լուսանկարներն արդեն մեզ շատ հարագատ են: Դրանցից են, օրինակ՝ Վիլյամ Մարտյանի, Վահրամ Փափագյանի, Մինաս Ավետիսյանի, Մարտիրոս Մարյանի, Գուրգեն Մահարու, Ռուբեն Մամուլյանի և հայազգի այլ կարկառուն մարդկանց դիմանկարները: Մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյանին բազմիցս են լուսանկարել: Սակայն նրա հայացքի փիլիսոփայական խորքերը կարողացել է որսալ Անդրանիկ Քոչարը: Վարպետին բնորոշող կադրը ստանալու համար նա կոմպոզիցիան կառուցել է լրացնող այն մանրամասներով, որոնք խոսում են բանաստեղծի բնավորության մասին: Բոլորիս քաջ հայտնի, խորհրդանիշ դարձած լուսանկարը տպագրվել է նաև որպես նամականիշ (նկ. 1):

Ա. Քոչարի ստեղծագործության մեջ կարևոր տեղ է գրավում բնապատկերների շարքը: Նա սիրում է հայրենի բնությունը: Նրա լուսանկարներում բնությունը կենդանի է՝ շարժվող և շնչող: Ու թեև դրանք սև ու սպիտակ են, դիտողը գույներն էլ է զգում՝ շնորհիվ տոնային

⁵ Ափինյան Ա., Մարդը, որ հրաշքներ էր գործում (Հայաստանի Հանրապետություն, 29.IX.1994):

երանգավորման: Նրա գույներում արտացոլված են նաև հայրենի երկրի եղանակային փոփոխությունները:

Անդրանիկ Քոչարը Հայաստանը նկարել է նաև բարձրից՝ կիրառելով համայնապատկերային հորինվածքը: Նա ուրույն ճաշակով և հետաքրքիր մտածելակերպով է ներկայացրել հայաստանյան յուրահատուկ բնապատկերներ: Դրանց շարքում կան երկինք մխրձվող մերկ ու շեկ լեռներ, շեշտակի իջնող լեռան լանջ, ստորոտում՝ փոքրիկ գյուղ, դաշտեր, այգիներ, մեղմ լույս, ամպեր, ջրվեժներ, կիրճեր: Տասնյակ ցուցահանդեսներով նա ապացուցել է, որ հավատարիմ է հայկական թեմաներին, որոնցում նաև համամարդկային գաղափարներ է դրել:

Նրա օբյեկտիվից չեն վրիպել հայկական պատմական, ճարտարապետական հուշարձանները: Ժամանակակիցները պատմում են, որ Քոչարը քանդակագործ Ռուբեն Շահբազից խնդրել է «Բլ-18» ինքնաթիռի լամպ ճարել: «Ուզում էր գիշերային ֆոնի վրա նկարել հայկական եկեղեցիները»⁶:

Տաթևի, հնադարյան կոթողների, Էջմիածնի, Գառնու, Եղեգնաձորի, Ղափանի և նրա շրջակայքի հոյակապ տեսարաններն ու պատմական շինությունների լուսանկարները և ամառային ու ձմեռային բնապատկերները միասին վերցրած՝ արտացոլում են Արևելյան Հայաստանի բնութագիրը:



Նկ. 2


Այստեղով անցել են թուրքերը (1956 թ.)

Պատմական ու փաստագրական կարևոր նշանակություն ունեն Շուշիում արված լուսանկարները՝ կիսավեր Ղազանչեցոցն ու ավերված քաղաքը (նկ. 2):

Խիստ ուշագրավ են նաև Քոչարի նատյուրմորտները (նկ. 3). դրանցում պատկերված առարկաները՝ ծաղիկներ, մոմակալներ, զրրքեր, բանջարեղեն, մրգեր, տնային բույսեր, ընտրված են ժլատորեն՝ տվյալ կադրը իմաստավորելու նպատակով: Այս ժանրով ստեղծագործելիս նա կադրի

⁶ Խաչատրյան Ռ., Անդրանիկ Քոչար -75, Ասաց՝ կանգ առ ակնթարթ, ու ակնթարթը հավերժացավ (Ազգ, 10.XI.1994):

կոմպոզիցիան ավելորդ մանրամասներով չի ծանրաբեռնել, այլ այն կառուցել է՝ կարևորելով տեսարանի արտահայտչականությունը:



Նկ. 3
Օլիվ սոխեր (1959 թ.)

Իր աշխատանքային գործունեության ընթացքում Անդրանիկ Քոչարը հաճախ է հանդիպել Մարտիրոս Մարյանին և գրեթե առանց բացատրության լուսանկարել նրա կտավները: «Անդրանիկ Քոչարը բացառիկ էներգիայի և ճաշակի տեր մարդ է, լուսանկարչական ապարատը նրա ձեռքում հրաշքներ է գործում: Նրա լուսանկարները միշտ հետաքրքիր են, գեղարվեստական տեսակետից՝ ինքնատիպ և իրենց ուժով անմիջականորեն ազդում են մարդու վրա: Անդրանիկ Քոչարը արվեստագետ է, որն իր կամքն ու ճաշակն է թելադրում լուսանկարչական ապարատին»⁷, - այսպես է բնորոշել նրան Մարտիրոս Մարյանը: Քոչարի ստեղծած կերպարները դժվարությամբ են անհետանում դիտողի հիշողությունից: Առնո Բաբաջանյանը Քոչարի լուսանկարները համեմատել է երաժշտական բալլադների հետ՝ ասելով. «Անդրանիկ Քոչարի ստեղծագործությունները մարդուն ուղղված սիրո երաժշտություն են»⁸:

1947 թ. Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքից ներգաղթելով Հայաստան՝ նույն թվականից նա աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ որպես

⁷ Պարսամյան Ա., Լուսանկարչի աշխարհը (Հայրենքի ձայն, 20.X.1971):

⁸ Ափինյան Ա., նշվ. աշխ.:

օպերատոր: Նկարահանել է մեկ մասանոց երաժշտական ֆիլմ՝ «Գայանե Չերտարյան», որն արժանացել է լավագույն երաժշտական կարճամետրաժ ֆիլմի՝ տարվա մրցանակին:

Կինոստուդիայում աշխատելու ընթացքում Քոչարը ստեղծում է լուսանկարների մի շարք, որով պատկերացում ենք կազմում այդ ժամանակաշրջանի հայկական կինոաշխարհի մարդկանց ու նրանց աշխատանքային պայմանների մասին: Այս նկարաշարը կոչվում էր «Գյանքը նկարահանման պահին», որը 2008-ին լույս տեսավ «Գեցցե կինոն»⁹ խորագրի ներքո:

Աշխատելով կինոստուդիայում՝ Ա. Քոչարը հավերժացրել է շրջապատի և դերասանների կամքից անկախ ստեղծված հետաքրքիր, անկրկնելի, նաև ծիծաղաշարժ պահերը: Մի տեղ փորձի ընդմիջմանը հանգստացող դերասաններն են, մի այլ կադրում՝ լարված ու քրտնաթաթախ օպերատորը, երրորդում՝ հանրաճանաչ դերասանը, որ ծածուկ տեսախցիկից անտեղյակ՝ մածուն է ուտում: Հաջորդում դերասանն ու դիմահարդարը պատրաստվում են նկարահանման, մյուսում Փարաջանովը պարապում է դերասանուհու հետ և այլն:

Ա. Քոչարը գեղարվեստական լուսանկարչություն է ներմուծում մոնումենտալություն. մի երևույթ, որը բնութագրում է վարպետի ստեղծագործական ձեռագիրը: Արվեստագետ Քոչարին բնորոշ է նաև մեկ այլ հատկանիշ. նա իր դիմանկարներում բացահայտել է տարբեր բնավորության տեր մարդկանց ներաշխարհը: Դրան նա հասնում էր բնորոշին հարազատ ու հաճելի դարձած միջավայրում նկարելով: Ա. Քոչարի լուսանկարների լուծումներում պատահական ոչինչ չկա: Մտածված են նրա կադրերի կոմպոզիցիաները, լույսի ու ստվերի հակադրությունները, պլանների հետաքրքրաշարժ ու բացառիկ լուծումները: Բնության ու մարդկային հոգեվիճակների անկրկնելի ակնթարթներ է հավերժացրել Քոչարն իր աշխատանքներում:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Անդրանիկ Քոչարը սև ու սպիտակի, լույս ու ստվերի երանգավորման խոշոր վարպետ է: Նրա համար լույսը ինքնանպատակ չէր, այլ ծառայում էր որպես մի- ջոց՝ բացահայտելու կերպարի ներքին էությունը, իսկ հաճախ՝ ընդգծելու ամենաբնորոշը: Նրա լուսանկարները Հայաստանի 1950- 1970 թթ. մշակութային կյանքի իսկական հուշարձան են և մինչև այսօր չեն կորցրել իրենց գեղարվեստական ու ճանաչողական կարևոր նշանակությունը:

ОСОБЕННОСТИ ФОТОКОМПОЗИЦИЙ АНДРАНИКА КОЧАРА

ԱՐԱԿԵԼՅԱՆ Գ. Ա.

Резюме

Изучение творчества Андраника Кочара явствует о том, что его фотокомпозиции сродни произведениям искусства. А. Кочар привнес в художественную фотографию монументальность, характеризующую его авторский почерк.

Присущие его работам светотеневые акценты отнюдь не являются самоцелью. Они помогают раскрыть суть образа, усиливая его эмоциональное воздействие на зрителя.

⁹ Նույն տեղում: